

Հարգելի՛ հայրենակիցներ, մենք՝ երեխաներս, չենք հիշում ժամանակ, երբ տագնապով և հուզմունքով բանակ ենք ճանապարհել մեր եղբայրներին և հարազատներին, քանի որ այդ դանդաղ ընթացող պատերազմն ուներ իր օրենքները և, ցավոք, նաև իր զոհերը: Թշնամին հերթական անգամ հարձակվել է մեր հայրենիքի վրա, մենք հարյուրավոր տարիների պատմությունից արդեն գիտենք նրանց ձեռագիրը, մենք շատ ուրախ ենք, որ ապրում ենք ժողովրդավարական երկրում և կրկնակի ուրախ ենք, որ մեր ղեկավարները չունեն ցանկություն՝ վաճառել մեր ապագան իրենց բարեկեցության համար: Մենք ուզում ենք մեծանալ և ստանալ կրթություն ազատ և ինքնիշխան երկրում: Մենք կարող ենք զրկել մեզ այն բարիքներից, որը պետք է ունենա 21-րդ դարի յուրաքանչյուր երեխա, բայց մենք ուզում ենք ապրել արդար, հաղթող և հզոր հայրենիքում:

Հարգելի՛ հայրենակիցներ և սփյուռքահայություն, մենք ունենք երկու ուղի. առաջինը պատմությունից դասեր քաղել և չխոնարհվել մեծ տերությունների դեմ՝ դառնալով ևս 100 տարի նրանց ստրուկները: Երկրորդը, միավորել մեր ունեցած նյութական և ֆիզիկական ռեսուրսները, կռվել հանուն ազատության, արժանապատվության և զբաղեցնել աշխարհի առաջադեմ երկրների շարքը: Մեր պետականությանը պետք է ձեր օգնությունը: Հարցերի համար դիմե՛ք տեղական ինքնակառավարման մարմիններին :

**Ալլա Աբրահամյան**